Ցոյ չներ, լոյսն այնպէս կու լինի. դուք մոլորեցաք և հետ ճշտին զատիկ արիք. և հոռոմնին ի յամօթացն չեն զրուցեր։ Եւ երբ տեսան որ այսպէս հրաշք եղաւ, նայ Երուսաղեմայ զատին ինքն իւր ձեռօքն տասն թուխթ կու գրէ, և զիւր մօհրն ի վերայ կու կոխէ, և զպարոնին և զէմինին, կու տայ պարոնին քօֆխային, թէ առ և տար Հայոց ազգին բաժանէ. և քօֆխայեան զթխթերուն զորն ի Հայլապ կու տայ, զորն ի Ամիթ, զորն ի Ղայսարի և զորն ի Թոխաթ և ի Սեւաստ, և զմէկ թուխթն յԸստամպօլ բերին. և զայս բաներս ամէնն ի մէջն գրած էր. և յետոյ գրած էր, թէ Հայոց ազգն հանց ազգ է՝ որ զԺԱ (11) ազգն կոխեց և սևերես արաւ։ Եւ Յերուսաղեմայ մինչև յԸստամբօլ զինչ քաղաք որ կայ՝ զամէնն զհոռոմնին տուգներ են, թէ դուք զձեր հաւատն մոլորեցաք. և Հայոց ազգ խիստ ուրախացեր են, և տավուլով և զուռնայով կերևխում՝ են արեր. և ամէն ազգ հոռմին յետևանցն կու կանչեն, թէ զզատիկն մոլրեցաք և ճուհուտ եղաք. նոքա այլ ի յամօթնացն և սևերեսութենէն մարդու երես չեն նայեր և ճուտոյ չեն ի տար։

Եւ երբ մեզի այս բարի խապարս որ եկաւ և զթուխթն կարդացին, ՀԲ (72) միլլաթ լսեց, և Հայոց ազգն խիստ ուրախացան, և հոռոմնին սևերես եղան և գլխիկոր. և արարիչն Աստուած զՏէր Աստուածատուր վարդապետին աւուրքն շատ այնէ, որ ժողովեց զԸստամբօլու զքահանայքն և զտանուտէրքն, և ասաց. թէ, Այս տարի հայոյ տարու գլուխ է. զինչ որ ձեր նամուսն է՝ նա զայն արէք։ Եւ առաք զԵրուսաղեմայ եկած քօֆխայեան իւր մարդոցմովն, և տավուլով և զուռնայով, նաղարով և պօռուով, ի Սուլու մանաստիրն ի պատիւ բերաք իւր մարդոցմովն, և երեք օր հարկեցաք։ Եւ վարդապետն մէկ աղէկ կապայ մի փէշքաշ երետ, և Ըստամբօլու տօլվաթորքն մէկ արծաթի սուրահի մի տվին և արծաթի մոշոպայ[1] մի և արծաթի թաս մի, և արծաթի գաւաթ մի. և թող զայլ ֆլորիքն որ տվին, և ի տավուլէն և ի զուռնայէն, ի նաղարայէն և ի պոռուէն հանց եղաւ, որ Ըստամբօլ քաղաք ի դունդ (թունդ) ելաւ։ Եւ տաճկաց ազգն կ'ասէին թէ այս ի՞նչ ուրախութիւն է. նայ կ'ասէին թէ Հայոց ազգին Յերուսաղեմայ խապար եկեր է՝ որ լոյսն Հայուն ելեր է, և հոռմին լոյս չէ ելեր. և հոռոմ ազգն ի սևերես լինալուն մէկ շաբաթ ի դուրս չելան։ Եւ այսոր յետև գնաց քօֆխայեան ինքն իւր բանն. և մէկ շաբթու յետև հոռմի դարձած տաճիկ եկաւ, որ զԵրուսաղեմայ բերդին դուռն կու պահէ եղեր է, նայ այլ այսպէս զրուցեց. և հոռոմներուն յերեսն կու թքնուր. և կ'ասէր, թէ զհաւատքն ձեր մոլորեցաք։ Եւ յետոյ յայլ կանանչ գլուխ եկաւ, և ճուհուտ եկաւ, և արապ եկաւ, և ենկիչարի եկաւ, և Հոռոմ եկաւ. և նոքա այսպէս վկայութիւն տվին, և Հայոց ազգս առաւել ուրախացան։ Եւ յետոյ յուլիսի ԻԲ, Երուսաղեմայ Քրիստոսի գերեզմանին յարութեան լուսարարն եկաւ, որ զլոյսն ինքն իւր ձեռաւքն է

1. Կուժ. ջրի աման։